ԾԱՂԿԱՓԱՂ ԵՒՐՈՊԱԿԱՆ

Շաբոպրիան

Բոյնք թռչնոց :

Տեսչութիւն գերահրաշ 'ի բոյնս թռչնոցն արտափայլէ. չէ մարթ առանց գորովելոյ նկատել 'ի նոսա զվերնախնամ բարութիւնն, որ զապիկարն ճոխացուցանէ ճարտարութեամբ, և զթերահոգն նախահայեաց պատրաստէ։

Ա.յն ինչ ծաղկափթիթ զարդարին ծառք, բիւրք բիւրուց արուեստագործաց ելանեն 'ի գործ. կէսք շիւղս յարդից երկայնագոյնս բարձեալ բերեն 'ի ծերպս վաղժամանակեայ որմոց, և կէսք 'ի պատուհանս եկեղեցւոյ որմեն տունս. ոմանք զձիոց գողանան բաշս, կամ զծուէնս գզաթիցն զորս ոչխար թափառական զցանկովք մորենեաց թողու կռուեալ. և այլք 'ի բարձունս ծառոց զկրկուտսն զօրէն փայտահարաց ըզմիմեամբք կուտեալ կցորդեն. և այլք դարձեալ զմետաքսն մանեալ զոքոզ փշովքն ոստայնանկեն։ Ա.պարանք բիւրաւորք 'ի վեր ամբառնան, որոց մէն մի դադարք են թռչնոց, և յիւրաքանչիւր 'ի նոցանէ բազմադիմի հրաշագործին այլակերպութիւնք։ Զուն սպիտակափառ փոխի 'ի թռչնիկ ծածկեալ յաղուամաղս. որոյ այն ինչ թևքն բուսանին, հրահանգէ զնա մայրն զխանձարրովքն սաւառնել. ապա հուպ ընդ հուպ թևածեալ դարի 'ի ծայր որորոցին պարադիտել անտի՝ զայն առաջին նուագ՝ զտեսիլ համագոյից. և երկիւղախառն հիացմամբ խուճապեալ անկանի առ եղբարս իւր, որոց չև ևս 'ի զնին կայեալ է տեսարանին։ Ա.յլ 'ի կոչ ծնողացն ելանէ միւսանգամ 'ի բընոյն դեռահասակ թագաւորիկն օդոց՝ բերելով դեռ ևս զգլխովն զպսակն մանկութեան, և յանդուգն աչօք ձկտի ընդ լայնածաւալ տարածութիւն երկնից, ընդ գագաթն մինատատան ճօճելոյ

սարոյին և 'ի խորաձոր մարգագետինս որ առ արմամբ իւրոյ բնիկ կաղնւոյն։ Այս մինչդեռ հրձուին մայրիք ընդունել զնորեկ հիւրն, անդուստ թռչուն հինաւուրց՝ 'ի թողանալ թևոցն զօրութեանն՝ գայ ի ջանէ յատին վտակաց ջուրց, և խաղաղիկ 'ի միայնութեան անվրդով սրտիւ դէտ ակն ունի մահուն՝ անդ առ գետեզերբն ուր երբեմն զխանդ սիրոյն գեղգեղեաց, և առ ծառոյն՝ յորոյ 'ի կողերս երևին տակաւին բոյն իւր և խանձարուրք և քաղցրաձայն սերնդոցն պար։

Այսպէս առ տեղեաւս է նկատել և զայս օրէնս բնութեան, զի թռչնոյն մանուանց ըստ ազգի՝ գոյն ձուոյն է հասարակաբար ըստ միոյ 'ի ձոխագոյն գունոց աւրուին։ Զու սեակտուց հաւոյն, որ զբուն իւր դնէ 'ի դժնիկն սպիտակ, 'ի հաղարջենին և 'ի մացառս պարտիզաց մերոց, սեւորակ է 'ի գոյն արդիսեան քարին յոր թիկնամէջք իւր հարկանին։ Տեսի երբեմն, որպէս յիշեմ, զբոյն մի թռչնոյս 'ի վարդենւոջ՝ 'ի նը-մանութիւն խեցւոյ գաղտակրէի, և 'ի նմա մարգարիտք չորք կապուտակք, և վարդ ցօղաթուրմ կախեալ 'ի վերուստ. և արուն սեակտուց մատ դարեալ կայր անդ անշարժ 'ի փոքրիկ թփի իբրև զծաղիկ փողփողեալ 'ի կապոյտ և 'ի ծիրանի։ Այս պատկեր տեսլեան նոցա ցոլանայր 'ի ջուր առ երի լճակին հանդերձ ստուերատեսակ հովանեաւ ընկուզենւոյն, որ լուսաւորագոյն ևս զտեսարանն վերբերէր, և յետկուսէ նորին ծագէր արշալոյս։ Այնդ՝ որպէս 'ի դոյզն պատկերի տայր մեզ Այրարչապետն ըզձաշակ իմն համագոյիցն գեղեցկութեան, որով պձնեացն զնոսա։

Այլ նոյն օրէնք են և գունոյ ձուոց հաւուցն մեծամեծաց։ Զուի ինձ զի թռչնոցն, որոց բազումք իցեն էգք, և որոց չիցէ գոյն փետրոց սեփական ըստ ազգի, նոցա ձուք հասարակաբար սպիտակք իցեն։ Զբայնոցն և անտառայնոց, որոց առաջինքն 'ի ծովու և վերջինքն 'ի բարձունս ծառոց դնեն զբոյնս իւրեանց, հասարակաբար հարկանին ձուքն 'ի կանաչ կապուտակային, կամ զի այսպէս ասացից՝ զշուրջ կացելոցն իրաց առնուն զգոյն։ Իսկ որոց 'ի բարձունս աշտարակաց և 'ի զանգակատունս պատսպարին, 'ի գոյն բաղեղան են գոյնք ձուոց նոցա, կամ կարմրակերպք ըստ գունոց որմոցն յորս բնակեն։ Զայս ապա մարթ իցէ ունել հաստատութեամբ որպէս օրէն անփոփոխ, զի թռչունք առհասարակ տպաւորեն 'ի ձուս իւրեանց զնշանակ տարփանացն իւրեանց և զտիպս բուսոյ բարուցն և զտարազու կենաց։ Զատ իցէ տեսանել զայն դիւրաբեկ արձան առ 'ի գուշակելոյ փոքր 'ի շատէ զազգ նորա և զսերունդ, զբարս և զսովորութիւն և զախորժակս. և թէ ծովաշրջիկ արդեօք վարէր կենցաղ բազմավտանգ, եթէ երջանկագոյն ևս՝ հովուական կենցաղով կեալ ձահաւորէր. վայրագասուն էր՝ եթէ քաղաքացի, լերանց՝ եթէ մարգաց բնակիչ։ Հետախուզիցն հնութեանց մայրեաց ստուգագոյն են գիտութեանցն հաւաստիք, քան որոց զքաղաքացն հետազօտիցեն զհնութիւն. կաղնի կեղևեալ կամ մամռապատ յայտնագոյն ևս տայ մեզ իմանալ յորմէ զաձուումն ընկալաւ, որպէս ոչ սիւնն տապալեալ, որ չկարէ ցուցանել զձարտարապետն որ կանգնեացն զնա։ Զիրիմք և մահարձանք են մատեանք յիշատակի վիպաց մարդկութեան. այլ բնութիւն 'ի բուն իսկ 'ի կեանսն տպաւորէ զիւրն զամենայն. չեն պէտք նմա ոչ քարանց և ոչ որձաքար վիմաց՝ առ 'ի զգրեալսն յաւերժացուցանելոյ։ Զամանակն որ եկեր ծախեաց զպերճ արձանագիրս արքայիցն Այեմիթացւոց 'ի մահարձան բրգանց նոցա, ոչ զօրեաց ջնջել և ոչ նշանախեց մի յորոց 'ի պատեան ձուոյն իւրոյ դրոշմեաց եգիպտահաւն Իպիս։

ՇԱԹՈՊՐԻԱՆ, ՈԳԻ ՔՐԻՍՏՈՍ.